ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

14 նոյեմբերի 2023 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, ավագանու անդամ Սամվել Անանյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռաիսա Մինասյանը

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Արշակ Սրապյանը, Արայիկ Քոչարյանը, Էմմա Գասպարյանը, Արմենուհի Ոսկանյանը, Գրիգոր Կարապետյանը, Պավլիկ Պապինյանը, Սերյոժա Սարդարյանը և Շուշանիկ Հակոբյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էր՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության ղեկավար՝ Սուրեն Կոստանդյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Թիանա Բոջուկյանը և Սևակ Խաչատրյանը:

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 12 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սամվել Անանյանը ժամը 13.05-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստ վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 14-16-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

14. Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 06-Ի N 43-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Փամբակ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին:

զեկ. Լ. Անդրիասյան

15. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-Ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

16. Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական տարածքում ծառահատման և ծառաէտման աշխատանքներ կատարելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

Քվեարկությամբ, կողմ՝ 12 ձայների համաձայնությամբ որոշման նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծով:

Քվեարկությամբ, կողմ՝ 12 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 117-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի նոյեմբերի 14-ի թիվ 13 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

3. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի և համայնքային ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակոց սեփականության իրավունքով Վալոդյա Հովհաննեսի Կարապետյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

8. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի տարածքում 2024թ-ին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերին հավանություն տալու և հայտերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

9. Փամբակ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

10. 06-070-0318-0009 կադաստրային ծածկագրով հողամասերում երկաբանական ուսումնասիրություն կատարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

13. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

14. Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 06-Ի N 43-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Փամբակ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին:

զեկ. Լ. Անդրիասյան

15. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

16. Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական տարածքում ծառահատման և ծառաէտման աշխատանքներ կատարելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցով 2023 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում ձեռք է բերվել 2023թ-ի արտադրության բազմաֆունկցիոնալ էքսկավատոր CASE 570SV, որն անհրաժեշտ է ներառել գույքագրման փաստաթղթերում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 118-Ա/:

2. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ անհրաժեշտ է ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել համայնքի սեփականություն հանդիսացող CASE 570SV մակնիշի բազմաֆունկցիոնալ էքսկավատորը: Գույքը ձեռք էր բերվել Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող «Համայնքի կոմունալ տնտեսության զարգացում» ծրագրի շրջանակներում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 119-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի և համայնքային ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է 2024թ-ի բյուջեն հաստատելուց առաջ հաստատել Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի և համայնքային ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը 1-10 հավելվածներով: Հաստիքացուցակներում էական փոփոխություններ չեն արվում, հիմնական փոփոխություններն են.

1. Քանի որ 2023թ-ին սուբնբվենցիոն ծրագրով Լեռնապատի մանկապարտեզում իրականացվել է 2-րդ խմբի կառուցում, «Լեռնապատաի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում ավելացվել է 1,12 դրույք դաստիարակի, 1 դրույք դաստիարակի օգնականի և 0,5 դրույք երաժշտական ղեկավարի հաստիքներ:

2" «Փամբակ Կոմունալ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում նախկին 43 դրույքի փոխարեն սահմանվել է 42 դրույքային միավոր /ավելացվել է 1 վարորդ, պակասեցվել է 2 բանվորի հաստիք/:

3. «Մարգահովիտի ԿՄՄՀ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում ավելացվուում է 0,5 դրույք խմբավարի և 0,5 դրույք նվագակցողի հաստիք:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 120-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարին է դիմել Աիդա Հենրիկի Ոսկանյանը հողամաս գնելու խնդրանքով: Առաջարկվում է տալ համաձայնություն Աիդա Հենրիկի Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող 06-023-0234-0028 կադաստրային ծածկագրով հողամասին կից գտնվող 06-023-0234-0046 կադաստրային ծածկագրով, 0,019051 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը

նախապատվությամբ, կադաստրային արժեքի չափով՝ 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամով ուղղակի վաճառքով օտարելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 121-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակոց սեփականության իրավունքով Վալոդյա Հովհաննեսի Կարապետյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է Վոլոդյա Հովհաննեսի Կարապետյանին վարձակալության իրավունքով պատկանող 06-019-0104-0062 կադաստրային ծածկագրով 1,5 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահողից 0,03 հա հողամասը ջերմոցներ՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու և սպասարկման նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 122-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է աճուրդով օտարելու նպատակով նախագծով ներկայացված 12 լոտին ավելացնել ևս 6-ը: Առաջարկվում է տալ համաձայնություն 18 լոտ հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և 1 լոտ հողամասը վարձակալության իրավունքով հատկացնելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 123-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի տարածքում 2024թ-ին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերին հավանություն տալու և հայտերը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:
Զեկուցողը առաջարկեց տալ հավանություն Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված /նպատակային հատկացումներ ստանալու նպատակով/ Փամբակ համայնքի կողմից ներկայացվող ներքոնշյալ 6 սուբվենցիոն ծրագրերին և հաստատել հայտերը:
1. Վահագնիի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում, Վահագնաձոր բնակավայրում մանկապարտեզի շենքի վերանորոգում:
2. Դեբետ բնակավայրի խմելու ջրի ցանցի կառուցում:
3. Լեռնապատ բնակավայրի հանդիսությունների սրահի կառուցում:
4. Ձորագյուղ և Եղեգնուտ բնակավայրերի գազաֆիկացում:
5. Մարգահովիտ և Ազնվաձոր բնակավայրերի փողոցների ընթացիկ նորոգում ասֆալտապատման միջոցով:
6. Փամբակ, Վահագնաձոր և Բազում բնակավայրերի կենտրոնական փողոցների լուսավորության համակարգերի նորոգում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 124-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ Փամբակ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում օրենսդրությամբ սահմանվել է համայնքում իրականացվող ռազմավարական ծրագրավորման երեք փուլ: Համայնքի երկարաժամկետ ծրագիրը՝ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրն է, միջնաժամկետ ծրագիրը՝ երեք տարվա համար կազմվող համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է, իսկ կարճաժամկետ ծրագիրը՝ մեկ տարվա համար կազմվող համայնքի բյուջեն է: Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը մշակվում և հաստատվում է յուրաքանչյուր տարի՝ առաջիկա 3 տարվա համար: Առաջիկա երեք տարվա՝ համայնքի ՄԺԾԾ մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 125-Ա/:

9. ԼՍԵՑԻՆ - 06-070-0318-0009 կադաստրային ծածկագրով հողամասերում երկաբանական ուսումնասիրություն կատարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը առաջարկեց տալ նախնական համաձայնություն «Էրիկ Եղոյան Էդիկի» ԱՁ-ին համայնքային սեփականություն հանդիսացող 06-102-0012-0020 կադաստրային ծածկագրով 0,224132 հա հողամասում ավազի հանքի երկրաբանական ուսումնասիրություն կատարելու համար:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 126-Ա/:

10. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը առաջարկեց տալ համաձայնություն Վիկտոր Վելիխանի Ավետյանին վարձակալության իրավունքով հատկացված 06-023-0269-0037 կադաստրային ծածկագրով 0,875027 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ, ուղղակի վաճառքով օտարելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 127-Ա/:

11. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը առաջարկեց Տալ համաձայնություն Վիկտոր Վելիխանի Ավետյանին վարձակալության իրավունքով պատկանող 06-023-0268-0042 կադաստրային 0,613071 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 3-րդ վարելահող գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ, ուղղակի վաճառքով օտարելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 128-Ա/:

12. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-Ի N 08-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Փամբակ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Լիլիթ Անդրիասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հիմնական փոփոխությունները կատարվել են կարիքների գնահատման չափորոշիչների մեջ, հնարավորություն ընձեռնելով առավել թափանցիկ դարձնել գնահատման գործընթացը և առավել մեծ թվով սոցիալական շերտերի հնարավորություն ընձեռնել օգտվել սոցիալական աջակցությունից: Չափորոշիչների մեջ ավելացվել է պարտադիր ժամկետային ծառայող ունեցող ընտանիքները, բազմազավակ ընտանիքները, վարձով բնակվող, դժբախտ պատահարի զոհ ունեցող, հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ստացած անձ ունեցող, կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում գտնվող անչափահաս ունեցող, առանց ծնողական խնամքի մնացած երեխա խնամող, խնամակալ ունեցող և անհետաձգելի բժշկական միջամտության կարիք ունեցող

ընտանիքները: Նաև աջակցության տրամադրման նվազագույն չեմը սահմանվել է 4 միավոր՝ նախկին 5-ի փոխարեն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 129-Լ/:

13. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրամն բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է բյուջեի եկամուտները ավելացնել 371700 դրամով՝ որպես նվիրատվություն Մարգահովիտ և Դեբետ բնակավայրերում Բնության համաշխարհային հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի համար:

Ճանապարհային տրանսպորտ 04.05.01 նախահաշվի 4269 հոդվածով ավելացնել 300000 դրամ՝ ճանապարհային նշաններ ձեռք բերելու համար:

Սպորտ, մշակույթ 08.01.01 նախահաշվի 4239 հոդվածով ավելացնել 210000 դրամ՝ Լեռնապատի մարզիչի ծառայության համար:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 130-Ն/:

14. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական տարածքում ծառահատման և ծառաէտման աշխատանքներ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի 08.11.2023թ-ի թիվ 02-1-ԳՍ-76 գրությունը և Վահագնաձոր գյուղի վարչական ղեկավար Էդիկ Եղոյանի զեկուցագիրը, առաջարկվում է էլեկտրամատակարարման անվտանգության նկատառումներից ելնելով Փամբակ համայնքի վարչական տարածքով անցնող Վահագնաձոր 10 ԿՎ ՕԳ-ի անվտանգության գոտու սահմաններում իրականացնել ծառահատման և ծառաէտման աշխատանքներ: Ծառահատման և ծառաէտման աշխատանքների իրականացման պատասխանատվությունը դնել Վահագնաձոր գյուղի վարչական ղեկավար Էդիկ Եղոյանի վրա և առաջացած փայտանութը տրամադրել Վահագնաձոր գյուղի սոցիալապես անապահով ընտանիքներին:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 131-Ա/:

15. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարի տեղակալն առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2023 թվականի դեկտեմբերի 27-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում ***/կցվում է որոշում N 132-Ա/:***
Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2023 թվականի դեկտեմբերի 27-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 13.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ _____

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ _____

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ _____

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ _____

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ _____

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ _____

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ _____

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ